

ՄԱՏԵՆԱԿՈՍՈՒԹԻՒՆ.

Բագրատ Առվաղեանց. Աշուա Երկաթ, պատմական
վէպ, Մասն Ա.-75 կ. Մասն Բ. 75 կ. 1893—1894 թ.
Այս պատմական վէպը վերցրած է Հայոց պատմու-
թեան Փ. Դարուց (913—928) և պարունակումէ
իւր մէջ արարական արշաւանքների տիտր պարա-
գաները և Աշուա Երկաթի մէծ քաջազորդործու-
թիւնների կէս պատմական և կէս բանաստեղծական
նկարագրութիւնը. Այս գրքի ընթերցողը բացի գե-
ղարուեստական բաւականութիւնից կըստանայ ան-
շուշտ և այն մէծ օգուտը, որ կըծանօթանայ մեր
«Հին Հին գարուց» օրերի հետ. Հեղինակը գտնւում
է Բաֆֆու պատմական վէպերի ազդեցութեան ներ-
քոյ. Գրքերի գինը թանգ է նշանակուած.

Տիրուհի Կոստանեանց. Զինական առասպելներ.
(Թարգմանութիւն) դինը 15 կ. 1895 թ., Սա Տ. Կոստան-
եանցի տասն և հինգերորդ թարգմանութիւնն է ու
հրատարակութիւնը. Թարգմանիչ Տիկնոջ գլխաւոր
արժանաւորութիւնն այն է, որ նրա բոլոր հրատա-
րակութիւնները ընթերցանելի են, շատ հետաքրք-
րական և օգտակար. Այս անգամ նա թարգմանել է
Հինական Հինգ փոքրիկ առասպելներ, որոնք իրանց
գեղեցիկ բովանդակութեան շնորհիւ ներկայացնում
են ընթերցանութեան յարմար նիւթ փոքր և մեծ
երեխաների համար, ինչպէս և միւս հրատարակու-
թիւններն, այս գրքուկի թարգմանութիւնն էլ յա-
ջող է.

Կարինի. Երգարան. Հայի ցաւալի վիճակը հարինի երդերի մէջ գիրն է 1894 թ. Սական գրական և աշուղական ձեռվ գրուած ոտանաւորների ժողովածու է։ Հեղինակը բոլորովին չունի բանաստեղծական աւիւն։ Նա հրապարակախօս է և՝ առանց քաշուելու ամէն մի երեսին իւր սեփական անունն է տալիս։ Նա ողբումէ հայերի ցաւալի վիճակը և նրա պատճառները գանումէ «մշակական հոսանքի» և երիտասարդների ամուսնութիւնից խորշելուն մէջ . . . Աշուղական ձեռվ գրուած ոտանաւորները համեմատաբար աւելի են աջողուած քան գրական ձեռվ գրուածները։ Այս գիրքը կարող էր այդ ձեռվ և լրհատարակուել։ 2ը նայելով՝ որ հրատարակութիւնից գոյացած արդիւնքը հեղինակը լաւ գործի է յատկացրել, գիրն անպայման թանգ է։

1. ԱԶԳ. ՄԱՏԵՆ. ԺԶ . — Մատենսպրական
ՄԱՆՐ ՈՒՍՈՒՄՆԱՍՏՐՈՒԹԻՒՆՔ. — ՀԵՏԱԶՈՏԻ-
ԹԻՒՆՔ և Բնակչութ Մայն Ա. — Զ.

Անմեսիոս Պրոկղ, Խոսրովիկ Եպեփան և Սե-
կունդոս գրեց Յ. Վ. Տաշեան, Միւ ութէն. Վի-
ենա. 1895 թ. Եր. ՓԲ. № 296, 8.

ԱԶԳ. ՄԱՏ. ԺԵ. Հայկու իրան աշխատավրած թիւնը
ՀԱՅԱԳԻՏ. Պ. ԳԵՐԹԹԵՐԻ. և մի ամփոփուած և

Թարգմանուած հանդերձ ծանօթովթեամբք. ի Հ. Յ.
Տաշեան, Միստիկ. Վիեննա, 1895 թ. եր. 202.

Արեննայի Մխիթարեանց այս ձեռնարկութեան
նպատակն է մեր մատենագրութեան հետազոտու-
թեան նպաստել և ասով հայ մատենագրութեան ա-
պագայ պատմագրին հետազոտութիւնը փոքու իւիք
գիւրացնելը . . Այս նպատակին է ծառայում գրեթէ
ամբողջովին . . Ամսօրեայ հանդէսը . . որից հանուած
ու լրացնելով հրատարակուած են ահա այս մենա-
գրութիւնները (monographie).

Առաջին գրքոյն ամբողջովին գործ է գիտնական հ. Յ. Տաշեանի. որ արդէն իսկ յայտնի է Մխիթարեան հայրերի մէջ իւր հմտութիւնով և գիտնական ոճով՝ որից ղուրկ էին ցարդ Մխիթարեան հարք. Այս մանրակրկիտ ուսումնասիրութիւններից իւրաքանչիւրն մի քայլ յառաջադիմութիւն է գէպի հայկական գրականութեան իսկական ծանօթութիւնը. Երկրորդ հատորը Ամբողջովին թարգմանութիւններից է բաղկացած. Այժմեան հայագէտ գերմանացիների մէջ անշուշտ առաջին տեղն է բռնում Գութշմիդի և Հիմպիլի աշակերտ աստուածաբանութեան ուսուցապետ Փէթթէրը, որի առաւելութիւններից մէկն էլ այն է՝ որ նա բացի գրաբարից և աշխարհաբար է հասկանում. Յարգելի գիտնականի զբաղումներից դուրս է թէպէտ մեր գրականութիւնը, բայց նա Դարձեալ իւրաքանչիւր տարի մի աչքի ընկնող հետազօտութիւն է տալիս զանազան առիթներից օգաուելով. Հատ գովելի ձեռնարկութիւն է արդարեւ եւրոպացի հայագէտների. Հետազօտութեանց թարգմանութիւնը, այսու Մխիթարեան հարք օժանդակում են գիտնական հայեացքների տարածման և այն շրջանների մէջ, ուր օտար լեզուների գիտութիւնը անհնարին է պահանջել. Փէթթէրի ուսումնասիրութիւններն յայտնի են իրենց բարեխղճութեամբ և սրամասութեամբ. Նիշէլի բառգրքից քաղուած հատուածները գնահատելի են ամենայն կողմից, թէպէտեւ գրքի նպատակըն ու հեղինակի կոչումն աչքի առաջ եթէ չունենանք, պիտի դատապարտենք այն ճիգն, որով ամենայն տեղ հեղինակն աշխատում է վկայութիւն գտնել կաթոլիկ եկեղեցու համար. Թարգմանութեան ծանօթութիւնների մէջ 99 երեսում յիշատակութիւն չը գտանք Քառմգարտների կարծեաց, որ ընդունելով իսկ Փէթթէրի կարծիքը, ուղղում է նրա սխալներն եւ մի նոր Ենթադրութիւն է անում, որ արժանի է ուշադրութեան.

Հայ մատենագրութեան հետազօտողների և
ուսումնասիրողների համար ազգային մատենագա-
րանը մի կատարեալ շտեմարան է ։